քաղաքը իւր մերձակայ Ս. Խաչ վանքով՝ բոլորովին հայոց քաղաք կը դառնայ. Սուտաղ (Soldaja Սուղդա) իւր բազմամարդ հայութեամբ մեծ – Հայաստան անունը կը կրէ, որում կը վկայէ Եղիշէ Դ. Հռովմայ սրբազանին կոնդակը « ի կողմանս Մեծին Հայաստանու, ուր է եկեղեցին Սոլդայեցւոց[1] » 1432:

Ժ

ԱՇԽԱՐՀԱՇԷՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ Ի ԿԱՖԱ

Հայութեան ծաղկեալ միջոցն ի Ղրիմ՝ եղած է ի 1330 – 1475. բազմաթիւ ձեռագիրք այն ժամանակաց մէջ գրուած են, ամրակուռ մատրունք և եկեղեցիք նոյն միջոցին կառուցեալ են. շատ խաչքարինք նոյն ատեններ քանդակուած և կոփուած մինչև առ մեզ հասեալ են իրենց յիշատակարաններով: « Բարեխաւս են սուրբ Նշանքս » այս կամ այն բարեպաշտ Հայուն, որ հեռի ի սիրելի հայրենեացն՝ կնքեր է յոտար պանդխտութեան իր կեանքը: Թանի՞ սրտագին, հաճոյական, միանգամայն և տխրագին մտածութիւնք չեն յարուցանել հայ սրտերու մէջ այդ սեւացեալ խաչքարինք, ոմանք եկեղեցեաց պատերուն մէջ ագուցած, այլք բարձր բերդերու

1. In partibus Armeniæ majoris, in quibus Soldajensis ecclesia sita est. Բրիւն էջ 58.